ՄՏԿ-ՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎ-ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏԿՈՄ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄՏԿ-ի Արհմիության Հարավ-Կենտրոնի
Կենտկոմին յեվ Հիկ կից սպորտիվ
«ԿՈԼՈՍ»
ընկերության

796
4-21

Երևան 1936 թ.

17 MAY 2013 8924

Ռեկլամ-Հրատ. Բյուրո. Գյուղհրատի տպարան

Թողարկ № 542. Պատվեր № 873—471 Տիրաժ 4000

796 / 4-21 25 OCT 2010

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՄՏԿ-ի արևմիության խարավ-կենտրոնի կենտկոմին յեվ ՀԺԿ կից սպորտիվ «ԿՈԼՈՍ» (հասկ) ընկերության

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Կամավոր սպորտիվ «Կոլոս» ընկերությունը դնում է իր առաջ նպատակ.

ա) Լայն և մասսայական ֆիզկուլտ սպորտային աշխատանք ծավալել ՄՏԿ-ի արհմիության անդամների, կոլտնտեսականների, տրակտորիստների, կոմունիստական դուգանտեսական դպրոցների ուսանողների և նրանց ընտանիքի անդամների մեջ։

բ) Ընկերության անդամներին տալ ֆիզիկական [illegible] զարգացում, ՊԱՊ-ի

ՀՍՍՀ-ССР им. А. Мясникяна

կոմպլեկտի 1-ին և 2-րդ աստիճանին տիրապետելու հիման վրա և սպորտային վարպետության լայն զարգացում։

գ) Ոժանդակել կոփելու ուժեղ, առողջ, խիզախ, կարգապահ, ԽՍՀՄ-ի յերկրի պաշտպանությանը պատրաստ կուլտուրական աշխատակցի նոր տիպը։

դ) Մեքենատրակտորային կայանների սիստեմում ֆիզկուլտ նախապատրաստման միջոցով արմատացնել ՄՏԿ-ի բանվորների և կոլտնտեսականների մասսայական առողջացման և կոփվածության մեթոդները։

2. Ընկերության հիմնադիրները հանդիսանում են ՄՏԿ-ի միության հարավի և կենտրոնի կենտկոմը և ԽՍՀՄ-ի Հողժողկոմատը։

3. Իր գործունեության ընթացքում ընկերությունը դեկավարվում է ՀԱՄԿԽ-ի, ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին կից ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեի, միության Կենտկոմի նախագահության և ՀԺԿ-ի դիրեկտիվներով ու կարգադրություններով։ Ընկերության գործունեության վրա հսկելն և կոնտրոլը կենսագործում է ՄՏԿ-ի արհմիության կենտկոմը։

4. Ընկերության գործունեությունը տարածվում է միության կենտկոմի սպասարկման մեջ մտնող տերիտորիայի վրա, առանձին դեպքերում կարող են տարածվել նաև ուրիշ տերիտորիայի վրա, հատուկ վորոշմամբ։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

5. Ընկերությունը մասսայականացնում և սպորտի բոլոր տեսակները, հատկապես զարգացնում է նրա առանձին տեսակները, կախված կլիմայական պայմաններից, սեռից, տարիքից և այլն։ Այդ նպատակի համար ընկերությունը ստեղծում է սպորտիվ դպրոցներ, սպորտսեկցիաներ, անց է կաց-

նում ուսուցման հավաքներ, կազմակերպում է լագերներ և այլն։

Ընկերությունը ստեղծում է սպորտի առանձին տեսակների հավաքական կոլ՝ կոլիվներ, անց է կացնում սպարտակիադաներ, հավաքներ, հանդիպումներ (ընտրովի և միության առաջնության համար)։

6. Ընկերությունը ոգտվում է բոլոր այն իրավունքներից, որոնք տրվում են որենսդրությունով, հասարակական, կամավոր ընկերությունների կազմակերպություններին։ Ընկերությունը ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով և ունի իրավունք ձեռք բերելու իրեն անհրաժեշտ գույք, բաց անելու ոժանդակ ձեռնարկություններ, որոնք կապ ունեն ընկերության գործունեության հետ, կնքել բոլոր տեսակի պայմանագրեր, պաշտպանել գատարանում իր շահերը, համաձայնության մեջ մտնել ուրիշ ընկերությունների և հիմնարկների հետ։

Ընկերությունը իրավունք ունի կազմակերպելու բաց սպորտային յելույթներ, մրցումներ և այլն։ Իր ծախսերը հոգալու համար ընկերությանը իրավունք է վերապահվում իր հրապարակային յելույթները կազմակերպել (վճարովի)։

7. Ընկերությունը իրավունք ունի որենքով սահմանված ձևով, հրատարակել ֆիզկուլտուրային վերաբերող հարցերը, ինչպես նաև այդ խնդիրները պրակտիկորեն կենսագործելու համար բաց անել անհրաժեշտ լաբորատորիաներ, փորձակայաններ, ցուցահանդեսներ, արհեստանոցներ և այլն։

8. Ընկերությունը իր գործունեության ընույթի համեմատ իրավունք ունի կառուցելու ստադիոններ, կառուցվածքներ, լողի ավազաններ, դահլիճներ և այլն, որենսդրությամբ սահմանված կարգով։

9. Ընկերությունն իրավունք ունի տալու իր գործունեության հետ կապված դիպլոմներ և պրիզներ։

10. Ընկերությունը ունի.—

ա) Ընկերության անունով կնիք երեն բնորոշող նշանով։

բ) Ընկերության շտամպ։

գ) Միասնական ձևի իր հաշվեստը, հաստատված կրծքանշանը նաև դրոշակը և անդամատոմսը։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

11. Ընկերության միջոցները կազմում են՝

ա) ՄՏԿ-ի մուտքյան հարավի և կենտրոնի կենտկոմի, մարզային, յերկրային և տեղական մուտքյան հատկացումները։

բ) ԽՍՀՄ-ի ՀԺԿ-ի և նրա տեղական մարմինների հատկացումները։

գ) Իրավական անձանց հատկացումներ ու կոլտնտեսությունների պայմանագրերի համաձայն ստացվող գումարները։

դ) Ընկերության կողմից կազմակերպվող մրցումներից, յելույթներից, ֆիզկուլտտոնների, դասախոսությունների և մասսայական միջոցառումներից ստացված գումարները։

յ) Ձեռնարկությունները և կառուցվածքները շահագործման մեջ դնելու յեկամուտները։

զ) Մուտքի վճար 2 ռուբլի, անդամավճար 3 ռ. յուրաքանչյուր կվարտալում։

ե) Գույքը, որը կարող է հանձնվել ՀԺԿ-ի, նրա մարմինների, մուտքյան կենտկոմից և նրա ստորադաս կազմակերպությունների և խորհրդային ու հասարակական այլ կազմակերպությունների կողմից։

12. Իրավական անձերի մուտքի վճարի և անդամավճարի չափը որոշում է ընկերության կենտրոնական խորհուրդը։

13. Ընկերության կենտրոնական խորհրդի միջոցները ծախսվում են ընկերության խորհրդի նախագահության կողմից,

համաձայն միության կենտկոմի կողմից հաստատված նախահաշվի։

14. Տերկրային և մարզային ընկերության խորհրդի միջոցները ծախսվում են ընկերության կենտ. խորհրդի հաստատված նախահաշվով։ Ընկերության ցանցի կոլեկտիվների ներքին ողակի նախահաշիվը հաստատում է մարզային և յերկրային խորհուրդը։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

15. Ընկերության անդամներ կարող են լինել ՄՏԿ-ի, ՄՏՍ-ի, ՀԺԿ ի աշխատակիցները, բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցների ուսանողներն ու դասատուները, տրակտորիստների, կոմբայնավարների դպրոցների, գիտական-գիտահետազոտական կազմակերպությունների աշխատողները, ինչպես նաև բոլոր այն հիմնարկությունների աշխատողներն ու ընտանիքի անդամները, վորոնք ընդգրկված են ՄՏԿ-ի

արհմիության հարավ-կենտրոնի կենտկոմի կողմից և սպասարկվում են ՄՏԿ-ներով։

Ծանոթություն. – Ընկերության անդամ կարող են լինել նաև այն անձնավորությունները, վորոնք իրենց աշխատանքի բնույթով կապված չեն ՄՏՏ-ի միության կողմից սպասարկվող հիմնարկների հետ, սակայն ընկերության համար կարող են ոգտակար լինել։

Ցուրաքանչյուր առանձին դեպքում, վերոհիշյալ անձնավորությունների ընդունելությունը կատարվում է ընկերության ներքին ողակների վորևիցե մեկի հատուկ վորոշմամբ։

16. Ընկերության անդամ չեն կարող լինել՝

ա) Բոլոր այն անձնավորությունները, վորոնք դասված են հակահեղափոխական

հանցանքների, սոցիալիստական սեփականության պաշտպանության օրենքները խախտելու, խուլիգանության և ուրիշ արատավորող հանցագործությունների համար։

17. Ընկերության անդամները բաժանվում են՝

ա) թեկնածուների,

բ) իրական անդամների,

գ) պատվավոր անդամների։

18. Ընկերության իրական անդամներ կարող են լինել այն անձնավորությունները (կանոնադրության 14-րդ կետում նշված անձների թվից), վորոնք ունեն 16 տարեկան հասակ և լրիվ տվել են ՊԱՊ-ի կրծքանշանի առաջին աստիճանի նորմաները։

19. ՊԱՊ-ի 1-ին աստիճանի կրծքանշանի նորմաները լրիվ չհանձնողները ընկերության մեջ ընդունվում են, վորպես թեկնածուներ։ Թեկնածուները ՊԱՊ-ի 1-ին աստիճանի նորմաները տալուց հետո փոխադրվում են ընկերության իրական անդամ։ Նրանք, ովքեր մեկ տարվա ընթացքում չեն տվել ՊԱՊ-ի առաջին աստիճանի նորմաները ընկերությունից հեռացվում են։

Ծանոթություն.— Այն անձինք, վորոնք առողջության և հասակի պատճառով չեն կարող տալ ՊԱՊ-ի կրծքանշանի նորմաները, կարող են ընդունվել ընկերության անդամ, տեղական ընկերությունների խորհրդի հատուկ վորոշմամբ։

20. Ընկերության պատվավոր անդամներ կարող են լինել ընկերության կազմակերպություններից մեկի ընդհանուր ժողովի առաջադրանքով ընկերությունը ծավալելու և ամրացնելու համար մատուցած հատուկ ծառայության համար։

Այդ թեկնածությունները հաստատման են յենթակա ընկերության կենտրոնական խորհրդի կողմից։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Ընկերության անդամները ոգտվում են հետևյալ իրավունքներով՝

ա) Մասնակցում են վճռական ձայնի իրավունքով ընկերության անդամների ժողովներում, ոգտվում են ընկերության ղեկավար մարմիններում ընտրվելու իրավունքով։

բ) Իրավունք ունեն արտոնյալ կարգով հաճախել և ոգտագործել ստադիոնները, հրապարակները, չմշկաձողերը, լողարանները և ընկերության սպորտիվ այլ կառուցվածքները այդ թվում և տնտեսավարքով աշխատող ձեռնարկությունները։

գ) Իրավունք ունեն ընդունվելու սպորտ դպրոցները, դասընթացները, սեմինարները։

դ) Իրավունք ունեն հաճախելու ընկերության կողմից կազմակերպված սպորտի առանձին ճյուղի պարապմունքները, մասնակցելու ընկերության կողմից կազմակերպվող մրցումներին։

յե) Իրավունք ունեն կրելու ընկերության կրծքանշանը և ֆորման։

22. Ընկերության անդամները, վորոնք տիրապետում են ՊԱՊ-ի 2-րդ աստիճանի կոմպլեկտին և սպորտի վարպետներ են իրավունք ունեն ձրի հաճախել բոլոր սպորտիվ ձեռնարկումները, վորոնք կազմակերպում է ընկերությունը, նաև արտոնյալ գներով ստանալու սպորտային ինվենտարներ իրենց անձնական ոգտագործման համար։

23. Ընկերության անդամները և թեկնածուները ոգտվում են ընկերության անդամի բոլոր իրավունքներով, բացառությամբ ընկերության ղեկավար մարմիններում ընտրելու և ընտրվելու իրավունքից։

24. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է՝

ա) Կանոնավոր մասնակցել և պարապել ընկերության տեղական կազմակերպու-

թյունների սպորտ սեկցիաներից մեկում։

բ) Սիստեմատիկաբար բարձրացնել յուր կուլտուրական և սպորտային մակարդակը։

գ) Ակտիվորեն աշխատել արմատացնել ու խորացնել ՄՏԿ-ի աշխատողների և կոլխոզնիկների մեջ, ֆիզիկական կուլտուրան, և սանիտարական-առողջապահական գիտելիքները։

դ) Անդամավճարները մուծել միշտ վորոշված ժամկետին։

յե) Ակտիվորեն մասնակցել ընկերության աշխատանքներին, բարեխղճորեն կատարել բոլոր պարտավորությունները, վորոնք բղխում են ընկերության կանոնադրությունից, նաև իր կոլեկտիվից տրված ղեկավարությունից։

զ) Լինել հարվածային արտադրական աշխատանքներում կամ ուսման մեջ։

է) Աշխատանք տանել ներգրավելու ընկերության մեջ նոր անդամներ։

ը) Մրցումների ժամանակ. յելույթ ու-

նենալ հատկապես իր ընկերության անունից։

թ) Հաճախակի հետևել իր առողջությանը և անցնել բժշկական քննության։

ժ) Պաշտպանել ընկերության գույքը, վորպես սոցիալական սեփականություն։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀԵՌԱՑՈՒՄ

25. Ընկերության անդամագրությունը կառուցվում է կամավոր, անհատական սկզբունքների հիման վրա։

26. Այն անձինք—վորոնք ցանկանում են ընդունվել ընկերության անդամ, պետք է դիմում ներկայացնեն լրացված անկետայի հետ միասին իր կոլեկտիվին—աշխատանքի կամ ուսուցման վայրում։

27. Ընդունելությունը կատարվում է ընկերության ստորին կազմակերպության անդամների ընդհանուր ժողովում։

28. Անդամավճարը տրվում է մուտքի

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библ.
ՀՍԽՀ-ССР

վճարը և սահմանված առաջին անդամավճարը տալուց հետո։

29. Ընկերության անդամները համարվում են ընկերության կազմից դուրս յեկած այն դեպքում, յերբ իրենք կամավոր կերպով հեռանում են։

30. Ընկերության անդամները հեռացվում են ընկերությունից 16-րդ կետով նշված դեպքում, 2-րդ կվարտալի ընթացքում անդամավճար չվճարելու և իր աշխատանքների մեջ ոգևորություն և ակտիվություն չցուցաբերելու դեպքում։

Ծանոթություն.— 1) Ընկերության անդամությունից հեռացնելը բացի 16 կետ. նշված դեպքերի կատարվում է կազմակերպության ներքին ոգակների ընդհանուր ժողովներում, ընկերության բարձրագույն օրգանի հետագա հաստատությամբ։

2. Աշխատանքի վայրից մի ուրիշ աշխատանքի կամ ուսման վայր տեղափոխվելիս, անդամը մեխանիկորեն փոխադրվում է այլ կազմակերպություն և պահպանվում է նրա անդամակցական ստաժը և մուտքի վճարը։

31. Ընկերության հեռացված և դուրս մնացած անդամներին, մուտքի վճարը և մուծած անդամավճարը հետ չեն վերադարձվում։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԱԾՔՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

32. Ընկերության սկզբնական կազմակերպությունը հանդիսանում է կոլեկտիվը, որը կազմվում է մեկ կամ մի խումբ հիմնարկներում, ՄՏԿ-ում, վերանորգման գործարաններում, գպրոցներում և հիմնարկներում։

33. Ընկերության բարձրագույն որգանը հանդիսանում է ընկերության համագումարը, համագումարները լինում են հերթական, որոնք գումարվում են ոչ պակաս 3 տարին մեկ անգամ և արտակարգ։

34. Ընկերության համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ընկերությունը ղեկավարում է կենտխորհուրդը, որը քննարկում և համագումարում 3 տարի ժամանակով։ Ընթացիկ աշխատանքների համար խորհուրդը առանձնացնում է նախագահություն, ազատված փոխնախագահով։

35. Ընկերության կենտրոնական խորհուրդը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՄՏԿ-ի կենտկոմի, ԽՍՀՄ-ի ՀԺԿ ի, ՀԱՄԿՄ-ի և ԽՍՀՄ-ի ժողկոմխորհին կից Ֆիզկուլտուրայի կոմիտեի դիրեկտիվներով։

36. Ընկերության համագումարին իրավասու է՝

ա) Քննել և հաստատել ընկերության գործունեության հաշվետվությունները։

բ) Քննել և հաստատել ընկերության աշխատանքների պլանները։

գ) Հաստատել վերստուգիչ հանձնաժողովի զեկուցումները։

դ) Ընտրել ընկերության կենտրոնական խորհուրդ և վերստուգիչ հանձնաժողով։

ե) Քննության առնել ընկերության կենտրոնական խորհրդի վրա դրված բողոքները նրա գործունեության մասին։

զ) Ընկերության կանոնադրության մեջ մտցնել անհրաժեշտ փոփոխություններ։

է) Ընկերության լիկվիդացիայի հարցի վորոշումը։

37. Ընկերության և տեղական մարմինների ամբողջ գործունեությունը ղեկավարում է ընկերության կենտրոնական խորհուրդը, համաձայն կանոնադրության և ընկերության համագումարի, ՄՏԿ-ի միության կենտկոմի, ՀԺԿ-ի, ԽՍՀՄ ժող-

կոմխորհին կից ֆիզկուլտուրայի և սպորտ կոմիտեյի և ՀԱՄԿՆ ի դիրեկտիվների։

38. Ընկերության կենտրոնական խորհուրդը գումարվում է 6 ամիսը մեկ անգամից վոչ պակաս։

39. Ընկերության կենտրոնական խորհրդի նախագահությունը կենսագործում է ընկերության գործունեության ղեկավարությունը

40. Յուրաքանչյուր մարզում, յերկրում ստեղծվում են ընկերության խորհուրդներ, վորոնք ընտրվում են համապատասխան ներքին կոլեկտիվների պատգամավորների կոնֆերանսներում 2 տարին մեկ և ղեկավարում են ընկերության բոլոր աշխատանքները տվյալ մարզի և յերկրի տերիտորիայում։

41. Ընկերության յերկրային և մարզային խորհուրդներն իրենց աշխատանքներում յենթարկվում են կենտրոնական խորհրդին և ղեկավարվում են միության մարզ-

կոմիտեների ու հողային վարչությունների դիրեկտիվներով։

Ծանոթություն.—Վիճելի հարցերը, վորոնք առաջ են գալիս ընկերության մարզային և յերկրային կազմակերպություններում, լուծվում են Կենտխորհրդի կողմից։

42. Ընկերության համագումարներին, պատգամավորներ ընտրելու կարգը և քանակը, ինչպես նաև համագումարի հրավիրման ճամկետը վորոշվում է ընկերության կենտխորհրդի կողմից։

43. Ընկերության սկզբնական կազմակերպության կառավարման մարմինը հանդիսանում է կոլեկտիվ անդամների ընդհանուր ժողովը և նրա ընտրած խորհուրդը, վորը ընտրվում է յուրաքանչյուր տարի։

44. Ընկերության բոլոր ոլորտներում ֆինանսա-տնտեսական գործունեության ստուգումը կենսագործելու համար կազմակերպվում է վերստուգիչ հանձնաժողով։

Վերստուգիչ հանձնաժողովը ընտրվում է ընկերության խորհուրդների ընտրության ժամկետով։

Ծանոթություն.— Վերստուգիչ հանձնաժողովի կազմում չեն կարող ընտրվել այն անձինք, որոնք վարում են ընկերության մեջ վարչատնտեսական պաշտոններ։

45. Վերստուգիչ հանձնաժողովի նիստերը տեղի չեն ունենում կարիք չեղած դեպքում և հրավիրվում են նախագահի կողմից, բայց վոչ պակաս վեց ամիսը մեկ անգամ։

46. Վերստուգիչ հանձնաժողովի կատարած քննությունները ու հետազոտությունների արդյունքները արձանագրությունների հետ միասին յուրաքանչյուրը, ներկայացվում է ընկերության խորհրդին,

առաջարկելով վերացնել հայտաբերված թերությունները։

47. Վերստուգիչ հանձնաժողովները պարտավոր են յուրաքանչյուր տարվա ընթացքում լրիվ ստուգել համապատասխան ընկերության խորհրդի բոլոր գործունեությունը, ստուգել ընկերության տարվա հաշվեկշիռը յեվ բալանսը։

48. Ընկերության խորհրդի նիստերում վերստուգիչ հանձնաժողովի անդամները մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏ. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ԱՊԱՐԱՏԻ ՇՏԱՏԸ

49. Ընկերության կենտխորհրդի չափը և կառուցվածքը սահմանում է ընկերության կենտխորհուրդը և հաստատվում է ՄՏԿ-ի մրության հարավ-կենտրոնի կենտկոմի կողմից։

50. Ցերկրային և մարզային խորհուրդների կառուցվածքը և շտատը հաստատում է ընկերության կենտխորհուրդը։

51. Կոլեկտիվների կառուցվածքը և շտատը հաստատում են ընկերության մարզային և յերկրային խորհուրդները։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐԸ

52. «ԿՈԼՈՍ» ընկերության անդամները կազմակերպվում են ՄՏԿ-ի, ՄԱՄ-ում, վերանորոգման գործարաններում, կոմունիստական գյուղատնտեսական գպրոցներում, կոլխոզներում, վորոնք սպասարկվում են ՄՏԿ-ի կողմից և հիմնարկների խմբակում։

Այն կոլեկտիվներում, վորոնց թիվը 10 մարդուց ավել է, ընտրվում է բյուրո, բաղկացած 3 հոգուց, 25 մարդուց ավելի— 5 հոգուց։

53. Ֆիզկուլտ կոլեկտիվների միջոցները կազմվում են՝

ա) Անդամավճարների 40 տոկոսից։

բ) Ձեռնարկությունների դիրեկցիայի և բանվորական կոմիտեի կողմից բաց թողնվող միջոցներից։

գ) Կոլխոզներին սպասարկելու համար պայմանագրով ստացվող գումարներից։

յե) Սպորտ դաշտերը շահագործելուց և վճարովի յելույթներից ստացվող գումարներից։

զ) Կամավոր նվիրատվություններից և խորհրդային կազմակերպությունների կողմից հանձնված կառուցումներից—գույքից, կոհավորումից և այլն։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖՈՐՄԱՆ

54. Ընկերության Ֆորման կանաչ գույնի յե, կրծքին սպիտակ շերտ, վորի լայնությունը 8 սանտիմ. կրծքի լայնությամբ։

55. Ընկերության դրոշակը պատրաստվում է կանաչ կտորից սպիտակ շերտով, որն անցնում է ներքին ձախ անկյունից մինչև վերևի աջ անկունը. վերևի ձախ անկյունում դրվում է «Գոլոս» ընկերության նշանը։

56. «Գոլոս» ընկերության նշանը կազմվում է սպիտակ սկավառակի (շրջանակի) վրա, նրա կենտրոնում յերկու կողմից գծերի մեջտեղում թեքաձև նկարված հասկով, տակը գրված «Գոլոս» և նկարված կես ատամնավոր անիվ։ Կրծքի նշանի շրջագիծն է 10 սանտիմ։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

57. Ընկերության կենտխորհուրդը յուրաքանչյուր տարի ներկայացնում է իր գործունեության հաշվետվությունը ՄՏԿ-ի միության Կենտկոմին և ԽՍՀՄ-ի ՀԾԿ ին։ Մարզային և յերկրային խորհուրդները

ներկայացնում են հաշվետվություն ընկերության Կենտկոմի խորհրդին և միաժամանակ ՄՏԿ-ի, ՀԾԿ-ի մարզային և յերկրային մարմիններին, ներքին կոլեկտիվները համապատասխան մարզային և յերկրային խորհուրդներին։

58. Հաշվետվությունը տարվում է ընկերության կենտկոմի խորհրդի կողմից տրված ձևով։

59. Բոլոր վճարված դրամական գումարների փաստաթղթերը, նաև ամեն տեսակի դրամական պարտագրերը պետք է ստորագրված լինեն համապատասխան խորհրդի և տվյալ ժամանակի նախագահի կամ նրա տեղակալի և գլխավոր հաշվապահի կողմից։

60. Ընկերության յուրաքանչյուր մարմնի ֆինանսական գործունեության կարգը վորոշվում է ընկերության կենտխորհրդի կողմից հաստատված հրահանգով։

61. Ընկերության և տեղական մարմինների կողմից կնքված բոլոր պայմանագրերն ու համաձայնությունները ստորագրվում

են կենտխորհրդի նախագահի կամ նրա տեղակալի կողմից։

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

62. Ընկերությունը դադարեցնում է իր գործունեությունը ՄՏԿ-ի միության հորավի և կենտրոն-կենտկոմի, ԽՍՀՄ ՀԺԿ-ի, ԽՍՀՄ-ի ԺԿԽ ին կից Ֆիզկուլտուրայի և սպորտի կոմիտեյի, ՀԱՄԿԽ-ի, ինչպես նաև ընկերության համագումարի վորոշմամբ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библиоте
ՀԱՍՀ-ՍՐ
им А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0283622

25

8924